

Կարդինալաց քուէթղթերն մի արկղի  
մէջ, որ կը բացուի ՚ի ներկայութեան  
ժողովցն : Արագէս զի ընտրութիւնն կա-  
տարուած համարուի, պէտք է որ ընտ-  
րելացուն ձայնից գննէ երկու երրորդ  
կամ երեք մասէն երկուան շահի : Եթէ  
մէծամասնութիւն չը գոյանայ, կը դի-  
մեն երկրորդ քուէարկութեան (ac-  
cessus) : Այսպէս կ'անուանի այն քո-  
ւէարկութիւնն , որուն մէջ Կարդի-  
նալներն իրենց քուէն կամ ձայնն մի  
այլ Կարդինալի կը տան և կը հաջակեն  
այս խօսքով աccedo domino . իսկ այն  
կարդինալներն , որք չ'են ուղեր իրենց  
առաջին քուէն փախել՝ կը հաջակեն  
այն խօսքերով աccedo nemini . Երբ  
ընտրութիւնն կը վերջանայ , ներս կը  
կոչուին երեք առաքելական դպրա-  
պետներն , քուէթղթերն զննելով կ'ար-  
ձանագրին ընտրութեան արդիւնքն ,  
և բոլոր կարդինալներն կը վաւերացը-  
նեն իրենց ստորագրութեամբ այն ար-  
ձանագրութիւնն : Պապի ընտրու-  
թեան ժամանակ երբեմն տեղի ունե-  
ցած են առանց քուէարկութեան  
ընտրութիւններ : Երբեմն ընտրողք  
դիմուծ են մի Կարդինալ ծանուցեալ  
ուղղամտութեան և իրաւունք տուած  
են ընտրել այն անձն , զոր արժանի կը  
աեսնէ նա Ս . Պետրոսի Ա.մոռոյն : Եր-  
բեմն Ս . Փողովն միակամ յայտարա-  
րութիւն արած է որ և իցէ կարդինա-  
լի ընտրութեան համար : Սակայն այս  
տեսակ ընտրութեան օրինակներն սա-  
կաւ են : Վերջապէս յարգանքը կա-  
տարուած ընտրութիւնն այն է , երբ  
ընարողաց երկու երրորդ մասն Պապ  
անուամբ կ'ողջունէ այն Կարդինալն ,  
որ արժանացած է իրենց քուէին :

ԽՍԹՈՅՆԵԼԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
ՊԱՊԵՍՏԻՆԻ

Լ ոնդոնում կազմուել է մի ընկե-  
րութիւն «Պաղէստինէի ընկերութիւն»  
անունով : Սորո գլխաւոր նպատակն է  
խրախուսել և օգնել Եբրայեցոց գաղ-  
թել Պաղէստինէ : Ընկերութիւնը իւր  
նպատակին հասնելու համար մեծ գոր-  
ծունէութիւն է ցցց տալի : Անցեալ  
տարուայ Դեկտեմբերի 11/25 Լոնդո-  
նում այս ընկերութեան կողմից մի պատ-  
գամաւորութիւն ներկայացաւ Տաճ-  
կատանի գեսպանին և հարցրեց . ար-  
դեօք Տաճկատանի կառավարութիւ-  
նից մինչեւ այժմ հրատարակուած հլ-  
րամաններն և վճիռները , որոնց նպա-  
տակն էր զանազան արտօնութիւնով  
գաղթականները գեղի Տաճկատան  
խրախուսել և հեշտացնել , մինչեւ այ-  
ժը պահպանում են իրանց զօրու-  
թիւնը թէ ոչ : Դեսպանը մեծ յարգա-  
նօք ընդունեց պատգամաւորներին և  
յայտնեց , որ այն բոլոր կազմակերպու-  
թիւնները մինչեւ ցայժմ ունին իրանց  
զօրութիւնն և մի ըստ միունէ համարեց  
բոլոր արտօնութիւնները , որ խոստա-  
ցած է Տաճկատանի կառավարու-  
թիւնից գաղթականներին , որ կը ցան-  
կանան բնակիլ թէ Պաղէստինէում  
և թէ Տաճկատանի միւս գաւառնե-  
րում : Բայց սորա յետ յայտնեց եւս ,  
որ տարաբաղդաբար այս արտօնու-  
թիւնները մինչեւ ցայժմ ոչ ոքին չեն  
հրապուրել գաղթելու դէսլի Տաճ-  
կատան : Allg. Zeit.

Այն տեղեկութիւնն Մէլլ-Հայտ-  
անի պատուական լրագրէն առնով  
և վերատին Ալճանի միջոցաւ հրատարա-  
կելով հանդերձ՝ կը յաւելունք , որ  
Պաղէստինի մէջ Հբէլից գաղթական-

ներն օր աւուր կը բաղմանան . աեղ տեղ ընդարձակ գետիններ կը գնեն , Երուսաղէմի արուարձաններուն մէջ նորանոր չէնքեր կը կառուցանեն ընկերական հանգանակութեամբ եւ ապա վիճակաւ կը բաժնեն իրենց մէջ : Վերջին ժամանակներս նոյն խոկ Ռուսաստանէն, մանաւանդ Կովկասեանկող մերէն , բաւականին Հրէայ գաղթականներ կը տեսնուին Երուսաղէմի մէջ : Հրէայք ունին թէ հին և թէ նոր ժողովարաններ և գպրոցներ, բաղաքի մէջ և բաղաքէն դուրս : Սակայն այս եւս զիսել արժան է , որ եթէ մի կողմէն Հրէայք հայրենասիրութեան եռանգով վառուած Պաղէստին կը գաղթեն , միւս կողմէն եւս Անգլիայ բարսղական ընկերութեան Երուսաղէմեան ճիւղն մէծ ջանքավ կ'աշխատի նոյս քրիստոնէական գարձի համար և այս մասին ամեննեւին յետոս չը կատիր օր և իցէ նիւթական եւ բարսղական զոհողութենէ :

չէնքերն վերջացած են արդէն և ամեն արձանագրութիւնք անվթար եւ անխափառ կը պահպանուին իրենց տեղն . յորոց վերայ Երկրարկեան մի վայելակերտ տուն բարձրացած է , որոյ մէծ միջնասենեն կի յատակն կը կաղմէ Արտաւանաց մօր՝ Շուշանաց դամբանարանի մողայիքէ ծաղկանկար արձանագրութիւնն :

Ռուսաց Գեր . առաջնորդն , որ անընդհատ կ'աշխատի՝ մի կողմէն իւր գնած ընդարձակ գետնի մէջ գտնուած հնութիւններն հետազոտել եւ միւս կողմէն նորանոր չինութիւններ կառուցանել , այս անդամ գտած է նաև հետեւեալ Հայերէն մողայիքէ արձանագրութիւնն , զոր արժան կը համարիմք հաղորդել մեր ընթերցալաց :

“ ՎԱՍՆ Ա.Դ.ԱԽԹԻՅ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԹԵԱՆ ԹԵԿԱՅ ԱԲԱՍՈՒ ԵՒ ՄՈՒՐԿԱՆ : ” (\*)

(\*) ՄԱՆ . — ԹԵԿԱՅ բառն անիմանալի կը մայմեղ համոր . յատակ անուն է արդեօք , թէ համարակ անուն եւ նշանակութիւն ունի , կորպը չ'ենք այս մասին որոշակի բան ասել :

## ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԱՐԶԱՆԱԳԻՐ

Ի ԼԵԱՌՆ ԶԻԹԵՆԵԱՑ

ՓԱՆԻ մի տարի առաջ հրատարակած ենք արդէն այն արձանագրութիւններն , զորս Երուսաղէմի Ռուսաց Եկեղեցւց Գերապատիւ առաջնորդն գտաւ Զիթենեաց լերան վերայ՝ նոր չինութիւններ անելու ժամանակ : Նոյն